



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

6 հոկտեմբերի 2017 թվականի N 100-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 241-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝


**ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային ենթակայության Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների խորհուրդների անվանական կազմը հաստատելու մասին» N 241-Ա որոշման հավելված 24-ում «Հովհաննիսյան Վարդիթեր» և «Արզումանյան Մանվել» բառերը փոխարինել «Սարգսյան Հասմիկ» և «Բաղդասարյան Անահիտ» բառերով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կից՝ ՀՀ Սյունիքի մարզի «Շիկահողի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի խորհրդի 2017 թվականի սեպտեմբերի 29-ի գրությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ



Վ. ՀԱԿՈՔՅԱՆ

ՀՀ Սյունիքի մարզպետ


Վ. Հակոբյանին

Հարգելի պարոն Հակոբյան

Հայտնում եմ Ձեզ այն մասին, որ «Շիկահողի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ծնողական խորհրդի կողմից առաջադրված խորհրդի անդամներ՝ Արզումանյան Մանվելը /նախագահ/ և Հովհաննիսյան Վարդիթերը /անդամ / երեխաների դպրոցն ավարտելու պատճառով ծնողական խորհուրդը առաջադրել է նոր խորհրդի թեկնածուներ՝ Սարգսյան Համիկին և Բաղդասարյան Անահիտին :

Ուստի՝ խնդրում եմ ԴԻՍ-ի անվանական կազմում կատարել համապատասխան փոփոխություն:

Խորհրդի նախագահ՝ *Սամ* Հակոբյան Գոհար



Ք Ա Ղ Վ Ա Մ Ք

<< Շիկահողի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ում 2017 թվականի սեպտեմբերի 10-ին կայացած

Ծնողական խորհրդի նիստի թիվ 1 արձանագրությունից

Նիստի մասնակցում էին ծնողական խորհրդի անդամներից 11-ը :

Լսեցին

Հիմք ընդունելով ՀՀ Կրթության և գիտության նախարարի N113 Ն հրամանը, տրված 2010 թ մարտի 18-ին և ՀՀ Սյունիքի մարզպետի թիվ 88 Ա որոշումը, տրված 17.06. 2010թ-ին ՀՀ Սյունիքի մարզի << Շիկահողի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ –ի կոլեգիալ կառավարման մարմնի խորհրդի ձևավորման համար ծնողական խորհրդի կողմից 2 անդամների ընտրության հարցը:

Ձեկուցումով հանդես եկավ դպրոցի տնօրեն՝ Ա Հակոբյանը: Նա ծանոթացրեց հաստատության խորհրդի անդամների ընտրության կարգին:

Այնուհետ

ա) Ծնողական խորհրդի կողմից առաջադրվեց հաստատության խորհրդի համար անդամության թեկնածուներ

1) Սարգսյան Հասմիկ Արարատի

2) Բաղդասարյան Անահիտ Բենիկի

բ) Ծնողական խորհրդի կողմից առաջադրվեց փակ գաղտնի քվեարկությունն անց կացվող հանձնաժողովի կազմը՝

1) Առաքելյան Նարինե Վրեժի /նախագահ/

2) Բարսամյան Փառանձեմ Վանուշի

3) Արրահամյան Նարինե Հենգելի

գ) Կազմակերպվեց փակ քվեարկություն, որն ավարտելուց հետո

դ) Չայները հաշվող հանձնաժողովի նախագահը հայտարարեց քվեարկության արդյունքները

1) Սարգսյան Հասմիկ Արարատի – 5 կողմ

2) Բաղդասարյան Անահիտ Բենիկի - 5 կողմ

ե) Չայների մեծամասնությամբ խորհրդի անդամ ընտրվեցին

3) Սարգսյան Հասմիկ Արարատի 5 կողմ , 10-րդ դասարանի ծնող

4) Բաղդասարյան Անահիտ Բենիկի 5 կողմ 10-րդ դասարանի ծնող

Նիստի նախագահ՝ *Առաքելյան Նարինե*  
Նիստի քարտուղար՝ *Արրահամյան Նարինե*